

Հայաստանի Հանրապետության

Շիրակի Մարզի Գյումրի Համայնքի Ղեկավար

Պրն. Ս. Բալասանյանին

անուն, ազգանուն

Խաթիռա Ասրադույն

հասցե

Վ. Գրիգորյան, Արշակունյաց 18^{րդ}, ք. Զ.

հեռ.

093144450, 094948989

Դիմում

Վ. Գրիգորյան, Քիմիկատի փողոցի քիմիկատի համայնքական
կառավարչությունը գրեթե չեզոք է՝ չկա նախնական անհրաժեշտ
փոխադրում, ցանկանում է՝ փոխել նոր կառավարչություն արժեք
և արդյունավետ գործունեություն կատարել, որպեսզի չի կառավարող
կառավարչությունը անհրաժեշտ գործունեություն կատարելու համար
որպեսզի կարողանա անհրաժեշտ համայնքական կառավարչություն
կառավարել, և եթե անհրաժեշտ կարգով, քանի որ անհրաժեշտ
կարգով և եթե անհրաժեշտ կարգով, քանի որ անհրաժեշտ
կարգով և եթե անհրաժեշտ կարգով, քանի որ անհրաժեշտ

02.08.2021 թ.

(օր, ամիս, տարի)

Դիմող՝

(ստորագրություն)

Խաթիռա Ասրադույն

(անուն, ազգանուն)






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 27 հունվարի 2016 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՆԻԿՈԼԱՅ ԶՎԱԿԵՐՅԱՆ ԿԱՐԼԵՆԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Մ. Թետչերի փողոց 10/1 հյուրանոց

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պետական գույքի մասնավորեցման պայմանագիր՝ վավերացված 12.11.2005թ. սեղանամատյան թիվ 8155, վարձակալության պայմանագիր՝ վավերացված 24.10.2005թ. սեղանամատյան թիվ 2949

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0441-0019

Մակերեսի չափը (հա)՝ 0.093676

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 07092020-08-0002, գաղտնաբառ՝ Z6FQD1YHZNA8

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	08-001-0441-0019-003	Ճաշարան	87.27 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	08-001-0441-0019-002	Հյուրանոց	179.79 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	08-001-0441-0019-001	Հյուրանոց	199.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գոռ Աղաբաբյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 07092020-08-0002, գաղտնաբառ՝ Z6FQD1YHZNA8

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար քսան թվականի սեպտեմբերի քսանչորսին

ք. Գյումրի

Ա/2 Նիկոլայ Չվակերյանի սնանկության գործով կառավարիչ Գարիկ Մկրտչյանը /ծնված՝ 17.07.1974թ., անձնագիր՝ թիվ AT0393211, տրված՝ 21.02.2020թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Մ. Խորենացի փողոց, 4 շենք, բն. 53/ (այսուհետ՝ Վաճառող), գործելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.10.2016թ.-ի թիվ ՇԴ1/0044/04/16 որոշման հիման վրա, մի կողմից, և Նաղեժդա Սարոյանը /անձն.՝ AT0300842, տրվ.՝ 07.11.2019, 008-ի կողմից, հասցեն՝ ք. Երևան, Սեբաստիա 18^ա շ., բն. 2/(այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն 17.07.2020թ. կազմված աճուրդի արդյունքների մասին արձանագրության՝ Վաճառողը վաճառում է Նիկոլայ Կարլենի Չվակերյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ անշարժ գույքը, իսկ Գնորդը, որպես սեփականություն ձեռք է բերում, այն է՝

- ք. Գյումրի, Թեոչերի փողոցի թիվ 10/1 հասցեում գտնվող թիվ կադաստրային ծածկագրով՝ 08-001-0441-0019 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-466,46քմ. /չորս հարյուր վաթսուսվեց ամբողջ քառասունվեց հարյուրերորդական քմ. / ՀՈՂԱՍԱՍ՝ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – 0,093676 հա., 466,46քմ. շենք շինություններից՝ 87,27քմ. ճաշարան, 179,79քմ. հյուրանոց, 199,4քմ. հյուրանոց, հիմք՝ սեփ. վկայական՝ 07092020-08-0002, տրված 27/01/2016թ. -ին:

1.2. Սույն պայմանագիրը կնքելու պահին գույքն այլ անձանց վաճառված, նվիրված, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրամցման միասնական ստորաբաժանման թիվ ՄՏ-07092020-08/-0285 միասնական տեղեկանքով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողը պարտավորվում է գույքը հանձնել, իսկ Գնորդն՝ այն ընդունել սույն պայմանագրի ստորագրման և պետական գրանցման պահից ետոյա ժամկետում հանձնման ընդունման ակտով:

2.2. Գնորդն իրավունք ունի՝

ա/ պահանջել Վաճառողից իրեն հանձնել գույքը և անհրաժեշտ փաստաթղթերը սույն պայմանագրում նախատեսված ժամկետում:

բ/ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված գույքը սույն պայմանագրով նախատեսված ժամկետում:

2.3. Գնորդը պարտավոր է՝

ա/ ձեռք բերված գույքի նկատմամբ իրավունքները երեսուն աշխատանքային օրվա ընթացքում գրանցել համապատասխան պետական լիազոր մարմնում:

բ/ վաճառողից գույքն ընդունել հանձնման-ընդունման ակտով:

3. Հաշվարկները

3.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է սույն պայմանագրի 1.1 կետում նշված գույքը 2.048.760 ՀՀ դրամով՝ համաձայն 17.07.2020թ. արձանագրության:

3.2. Գույքի արժեքը Գնորդի կողմից ամբողջությամբ փոխանցվել է սնանկության հատուկ հաշվին:

3.3. Պայմանագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցելու հետ կապված բոլոր ծախսերի համար վճարում է Գնորդը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ է երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրը կազմված է 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

6.2. Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման, որը համաձայն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի՝ ենթակա է պետական գրանցման երեսուն աշխատանքային օրվա ժամկետում և այն ծագում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում այդ իրավունքի պետական գրանցման պահից:

6.3. Պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ կամ դատարանի վճռով:

6.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՎԱՃԱՍՈՂ

ԳՆՈՐԴ

Ա/2 Նիկոլայ Չվակերյանի
սնանկության գործով կառավարիչ
Գաբիկ Մկրտչյան
/անձնագիր՝ AT0393211,
տրված՝ 21.02.2020թ., 064-ի կողմից,
հասցեն՝ ք. Գյումրի, Մ.Խորենացի 4/53/

Նադեժդա Սարոյանց
/անձն՝ AT0300842,
տրվ.՝ 07.11.2019, 008-ի կողմից,
հասցեն՝ ք. Երևան,
Սեբաստիա 18^ա շ., բն. 2/



Սարոյանց Նադեժդա
ստորագրությունը



Հայաստանի Հանրապետության անունից

24/09/2020 երկու հազար քսան թվականի սեպտեմբերի քսանչորս

Սույն պայմանագիրը վավերացված է իմ ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի
նոտար **ՌՈՔԵՐՏ ՏՈՒԼԿԻ ՍՈՒԿՈՒՉՅԱՆԻՍ** կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած
անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ների)
լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունք(ներ)ը
ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող
իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր
վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան
ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 4617-----ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար
ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար

Ռոբերտ Տոլիկի Սուկուչյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 02/07/2021

Փաստաթղթի N` Կ-02072021-08-0104

գաղտնաբառ՝ P0JQLJYAIQ6M

Հասցեատեր՝

Նադեժդա Զրիստաֆորի Սարոյանց

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Մ. Թեոչերի փողոց 10/1 հյուրանոց հասցեով

Ձեռ **N 29/06/2021-2-0064** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝

Անշարժ գույքի հողամասի նկատմամբ 2021թվականի փետրվարի 2-ին ներայացվել է վարձակալության իրավունքի դադարման դիմում, Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 25.02.2020թ. թիվ գործ ՇԴ/1545/02/19 վճռի հիման վրա՝ անշարժ գույքի հողամասի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունքը դադարեցվել է:
Համաձայն ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի կողմից 24/09/2020թ-ին և 13/10/2020թ-ին տրված տեղեկանքների՝ Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծով 936.76քմ մակերեսով հողամասից 293.27քմ մակերեսով հատվածը գտնվում է ՀՀ Հոդային Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, սակայն պարզ չէ/որոշված չէ/ նշյալ 293.27քմ հողամասի սահմանները: Տվյալ պարագայում իրավունքի պետական գրանցման ներկայացված օբյեկտի ՝ շինություններով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքի /ծագման հիմքերի/ վերաբերյալ չի ներկայացվել իրավահաստատող փաստաթղթեր, հիմք՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված: Տեղեկացվում է նաև, որ հողամասը գտնվում է միասնական տարածագնահատման 10-րդ գոտում, որտեղ

համաձայն 2019 թվականի նոյեմբերի 19-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենքով սահմանված՝ 1 քմ հողամասի կադաստրային արժեքը կազմում է 6834.3 ՀՀ դրամ: Դիմումին կից ներկայացված կադաստրային արժեքի վճարման անդորրագրի հաշվեհամարը չի համապատասխանում ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի համայնքային բյուջե մուտքագրվող հողի օտարման հաշվեհամարին:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի **Անշարժ գույքի ռեգիստր Արկադի Բոյաջյան ***

*Սույն որոշումը հաստատված է Էլեկտրոնային եղանակով՝ այն ընդունած պաշտոնատար անձի կողմից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ԿԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 30/09/2020

Փաստաթղթի N` Կ-30092020-08-0052

գաղտնաբառ՝ RQWELVRV4D72

Հասցեատեր՝

Նադեժդա Սարոյանց

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

համայնք Գյումրի ք. Մ. Թեաչերի փողոց 10/1 հյուրանոց

Ձեր **N 25/09/2020-2-0255** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝

համաձայն Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի կողմից 24.09.2020թ. տրված տեղեկանքի, անշարժ գույքի հողամասը մասամբ է գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և ըստ տեղեկանքի հստակ չէ տվյալ ցանկում գտնվող կամ չգտնվող հողամասերի մակերեսները: Ինչպես նաև անհաժեշտ է ներկայացնել 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չգտնվող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի **Անշարժ գույքի ռեգիստր Գոռ Աղաբաբյան ***

*Սույն որոշումը հաստատված է էլեկտրոնային եղանակով՝ այն ընդունած պաշտոնատար անձի կողմից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ 02/11/2020

Փաստաթղթի N` Կ-02112020-08-0066

գաղտնաբառ՝ SHDXDQHAUB2G

Հասցեատեր՝

ՆԱԴԵԺԱ ՍԱՐԴՅԱՆՑ ԶՐԻՍԱՖՈՐԻ

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

Գյումրի ք. Մ. Թեոֆիլի փողոց 10/1 հյուրանոց

Ձեր **N 28/10/2020-2-0125** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝

Ելնելով ներկայացված 13.10.2020 թվականի թիվ 02/02.3/14367-20 տեղեկանքից, 643.49ք.մ. մակերեսով հողամասի համար հարկ է ապահովել 04.10.2005թ. N 199-Ն օրենքի 23 -րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ / հոդվածի պահանջը՝ օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում /ինչի վերաբերյալ թիվ Կ-30092020-08-0052 կասեցման ծանուցմամբ հայտնվել է/:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի **Անշարժ գույքի ավագ ռեգիստր Գոհար Պողոսյան ***

*Սույն որոշումը հաստատված է Էլեկտրոնային եղանակով՝ այն ընդունած պաշտոնատար անձի կողմից: